«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԵՆԹԱԹԵՄԱ՝ ԿԱՐԵՎՈՐ Է ԱՐԴՅՈ՞Ք ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ(ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ) և ԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ:

ԱՌԱՐԿԱՆ՝ ԴԱՍՎԱՐ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. <<ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ.....5

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վաղ տարիքի երեխաների զարգացման և դաստիարակության խնդիրները մշտապես եղել են հոգեբանների և մանկավարժների ուշադրության կենտրոնում: Վաղ տարիքը երեխայի ամենակարևոր շրջաններից մեկն է, որի նշանակությունն անգնահատելի է նրա հետագա լիարժեք զարգացման համար: Այդ տարիքում տեղի է ունենում մարդուն բնորոշ հոգեֆիզիոլոգիական բոլոր գործընթացների բուռն զարգացումը, ձևավորվում են սոցիալական վարքի առաջին դրսևորումները, ձեռք են բերվում անձնային հատկություններ, որոնք ենթակա են զարգացման հետագա տարիքային փուլերում:

Այն ունի բազմաբնույթ խնդիրներ՝ բառապաշարի հարստացում, խոսքի զարգացում, լեզվական նախագիտելիքների ուսուցում, հնչյունային լսողության մշակում, կարդալու և գրելու կարողությունների ձևավորման և այլն, որոնք միաժամանակ իրականացվող գործընթացներ են:

Գրաճանաչության ուսուցումը լեզվի դասավանդման մեթոդիկայի ամենահիմնական բաժիններից մեկն է և ունի շատ հին պատմություն: Նրա սկզբնավորումը կապված է մարդկության գրավոր մշակույթի ու դպրության սկզբնավորման հետ: Գրաճանաչության ուսուցման մեթոդիկայի պատմությունը գրեթե նույնքան հին է, որքան և գրերի գյուտը, գրության կամ գրչության պատմությունը: Գրության յուրաքանչյուր տիպ ունեցել է ուսուցման իր առանձնահատուկ մեթոդներն ու ձևերը, որոնք սկզբունքորեն տարբերվել են մյուսներից: Գրուսուցման այդ մեթոդներն ու ձևերը հիմնականում պայմանավորված են եղել գրության տվյալ տիպի կամ համակարգի էությամբ, բխել են նրանից:

Գրաճանաչության ուսուցման այդ տարբեր մեթոդների ու եղանակների ծագումն ու զարգացումը երբեմն դրված են եղել գիտական հիմքերի վրա, իսկ երբեմ էլ տարերային բնույթ են կրել, որովհետև շատ հաճախ դրանք ծագելու ձևավորվել են հենց դասավանդմանը ընթացքում՝ գործնական աշխատանքում ստեղծված կոնկրետ իրադրության թելադրանքով: Գրաճանաչության ուսուցման սկզբնական մեթոդները ժամանակի ընթացքում անընդհատ փոփոխության են ենթարկվել, նորացվել ու թարմացվել են և կամ ուղղակի փոխվել նորերով ըստ ժամանակի պահանջների:

Թեմայի արդիականությունը: Մեր հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է գրելու կարողության ձևավորման գործընթացում՝ նախաայբբենական շրջանում, սովորողների ձեռքբերածգիտելիքների անհրաժեշտությամբ և գրաճանաչության նախաայբբենական շրջանի կազմակերպման ոչ կատարյալ մեթոդական համակարգով:

Նպատակը՝ մշակել մեթոդական ցուցումներ և քայլաշար, որոնք կնպաստեն նախաայբբենական շրջանի աշխատանքները կարդալու կարողության ձևավորմանը ծառայեցնելուն:

Առաջադրված խնդիրները՝

- ուսումնասիրել թեմայի վերաբերյալ տեսական և մեթոդական գրականություն,
- ուսումնասիրել տարրական դպրոցի չափորոշիչները, ծրագիրը և այլնընտրանքային Այբբենարանները,
- ծանոթանալ գրաճանաչության դասերին այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքին և ստուգել մշակված մեթոդական աշխատանքի արդյունավետությունը,
- մշակել և փորձարկել նախաայբբենական շրջանում կրտսեր դպրոցականների գրելու կարողության ձևավորմանը նպաստող վարժությունների համակարգ և ներկայացնել մեթոդական երաշխավորումներ:

Մեր ուսումնասիրության ընթացքում մենք կիրառել ենք հետևյալ **մեթոդները՝**

- մասնագիտական գրականության և տարրական դպրոցի կրթական փաստաթղթերի ուսումնասիրում,
- դասալսումներ առաջին դասարանում և դրանց արդյունքների քննարկումներ,
- հարցախույզի իրականացում տարրական դասարանների ուսուցիչներիշրջանում,
- մեր մշակած մեթոդական ցուցումների հիման վրա գրաճանաչության դասերի վարում:

Մեր հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունն այն է, որ մենք բացահայտենք և մշակենք նախաայբբենական շրջանում կազմակերպվող աշխատանքների այնպիսի մեթոդիկա, որը կնպաստի կարդալու կարողության ձևավորման արդյունավետությանը:

Աշխատանքը պարունակում է կրտսեր դպրոցականի, մասնավորապես՝ նախաայբբենական շրջանում գտնվող առաջին դասարանցու կարդալու կարողության զարգացմանը նպաստող նյութեր, ցուցումներ, մեթոդական պահանջներ, որոնք գործնականում կարող են օգտակար լինել տարրական դասարանների ուսուցիչների և սովորողների համար:

ԳԼՈՒԽ 1.

<<ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ>>

Տարրական դպրոցի առաջին դասարանի մայրենիի ծրագրում գրաճանաչության բաժնին հատկացված է շաբաթական 7, տարեկան՝ 210 ժամ: Առաջին դասարանցին, նախաայբբենական շրջանում, ընդհանուր պատկերացում ունի բանավոր խոսքի մասին, կարողանում է բավարարել հաղորդակցման պահանջները: Կարողանում է իրավիճակներին համապատասխան պատմել որևէ դեպք, իրադարձություն՝ խաղային, կենցաղային: Նկարում և պատմում է իր, իր ընտանիքի, ընկերների, խաղալիքների, շրջապատի մասին, ունի համեմատելու, հակադրելու և դասակարգելու կարողություն՝ ցուցադրված առարկայական նկարների մեջ որոշում է առարկաների նմանություններն ու տարբերությունները: Զարգանում է լսելու և խոսելու, մտքերը հասկանալի ձևակերպելու կարողությունը: Աստիճանաբար կարողանում է այբբենարանում զետեղված, մեծադիր թեմատիկ նկարի վերաբերյալ պատմություններ հորինել և շարադրել, որոշել նկարի բովանդակության շուրջ կազմված պատմության նախադասությունները՝առանց նախադասություն բառն օգտագործելու: Կազմում է պատմության գծապատկեր, գունային բաժանումներ է կատարում՝ըստ առանձին նախադասությունների: Խմբային աշխատանք է կատարում նկար-պատմության շուրջ: Գիտի նախադասության սկիզբը և վերջը խորհրդանշող նշանները, նախադասության՝ իբրև խոսքի բաղկացուցիչ տարրի հասկացության, պատմության և նախադասության տարբերակման կարողություններ է ձևավորվում: Ինչպես նաև պատմություն, նախադասություն, նախադասության սկիզբ, ավարտ բառերն է տեղին գործածում: Սովորում է հանելուկներ և բանաստեղծություններ, նկարագրում է որևէ վայր (տուն, բնակարանի ճաշասենյակ, խոհանոց, դասարան, խաղահրապարակ) և առանձնացնում նախադասությունները, բառերը և հաշվում (ծափերով, թմբուկի հարվածներով…): Տալիս է նախադասության գծապատկերը, բաժանում վանդակների՝ ըստ բաղադրիչ բառերի քանակի: Առաջին դասարանի մայրենիի ծրագրում հստակ նշված է, թե նախաայբբենական շրջանում սովորողն ինչ պետք է իմանա:

2. Այբբենական շրջանում (112 ժամ) հայերենի հնչյուն-տառերի ուսուցում է կատարվում: Զարգանում է տպագիր և ձեռագիր տառերի ճանաչման, հայերենի

տառերը գրելու, բառեր, նախադասություն, նաև տեքստ գրելու կարողությունը: Լսելու և խոսելու, ինչպես նաև դիտողականության և վերլուծական մտածողության կարողություններն են զարգանում: Սովորած ու նոր ուսուցանվող հնչյուններն ու տառերը միավորելու, վանկային կապակցություններ ու բառեր ստանալու կարողություններն են մշակվում: Ուղղախոսության, նախադասությունները միմյանց հետ կապակցելու և իմաստը նկալելու կարողությունների ձևավորման, տառապատկերները ամբողջական ընկալելու և դրանք տրված օրինակին համապատասխան վերարտադրելու կարողությունների մշակում, տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու, վանկային և հնչյունային վերլուծության կատարման կարողությունն է մշակվում: Սովորում են նոր ուսուցանվող հնչյուններն ու տառերը միավորել և վանկային կապակցություններ ու բառեր ստանալ:

3. Հետայբբենական շրջանում (7 ժամ) աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի ընթերցման և գրելու կարողությունների ամրակայման ուղղությամբ: Կատարվում են կարդալու նախնական կարողությունների, գրելու կարողությունների ամրակայման՝ վայելչագրական պահանջներով, տեքստի շուրջ տարվող աշխատանքների կազմակերպման և բառապաշարի հարստացման, լեզվական նախնական գիտելիքների գործնական յուրացման և ամրակայման կարողությունների կատարելագործում:

Առաջին դասարանի դասագրքում գիտելիքի օրվան հաջորդում է «Բնության գրկում», «Ես արդեն դպրոցական եմ», «Առաջին օրը դպրոցում», «Մեր ընտանիքը», «Աղվեսիկը», «Մեր բարեկամները», «Մեր բակում» թեմաները, որոնք սովորեցնում են հյուսել պատմություն նկարի շուրջ, տարբերել պատմություն, նախադասություն, բառ հասկացությունները, զարգացնում են բանավոր խոսքը: Օրվա ռեժիմ, հիգիենայի պարագաներին ծանոթացում, մաքրասիրություն, աշխատասիրություն դաստիարակում են «Առավոտյան մարմնամարզություն», «Նախաճաշ», «Վատ նկարը» թեմաները: «Այգում», «Մարդը չի կարող մենակ ապրել», «Մեր դասարանը», «Խաղ և աշխատանք», «Աղվեսն ու կռունկը», «Մենք օգնում ենք մայրիկին», «Տիկնիկային թատրոնում», «Գիրքը իմ լավագույն ընկերն է», «Գյուղում», «Ընտանի, թե վայրի» թեմաների միջոցով սովորեցնում ենք բառը բաժանել վանկերի, զարգացնում ենք բանավոր խոսքը, կատարում հնչյունային վերլուծություն, գծում բառի գծապատկերը: «Հարևանները», «Փողոցում», «Հանգստի ժամին», «Երեք փիսիկները», «Թե ինչ

պատահեց, երբ», «Եթե ուզում ես» թեմաներով ամրապնդում ենք ձեռք բերած գիտելիքները, սովորեցնում ենք որոշել նկար-պատկերների հաջորդականությունը և վերլուծել նկար-բառերը: Այնուհետև, սկսվում է հնչյուն-տառերի ուսուցումը: Այս դասերը յուրացնելու արդյունքում աշակերտները սովորում են գրել, պատմել թեմատիկ նկարը, աստիճանաբար սկսում են ստեղծել փոքրիկ պատմություններ, ազատ ձևակերպում են իրենց մտքերը, շարժողական տառերով կազմում են բառեր, փոփոխելով մեկ տառ՝ ստանում նոր բառեր, կարողանում են համադրել և հակադրել միևնույն մասնիկներ ունեցող տառերը, գրում են տպագիր ու ձեռագիր: Անգիր են սովորում հայերենի այբուբենը, ծանոթանում են հայերենի առաջին ուսուցչին: Ամրապնդվում են ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին գիտելիքները, կարևորվում են կետադրական նշանների գործածությունը: «Կորած օրը», «Ձնծաղիկ», «Ծաղիկն ու շողերը», «Մոխրիկի նվերը», «Ինչո՞ւ այդպես», «Ծաղիկն ու մեղուն», «Ինչո՞ւ երկու, ինչո՞ւ մեկ», «Ի՞նչ էր պակասում սկյուռիկին» թեմաները սովորեցնում են ազնվություն, դաստիարակում բարություն կենդանիների նկատմամբ, ինչպես նաև սովորեցնում են գնահատել հերոսներին ըստ արարքների, քաղաքավարական խոսքեր, բարոյական որակներ:

Դպրոցական տարիքի խոսքային նորմալ զարգացում ունեցող առաջին դասարանցին կարողանում է արտահայտել իր մտքերը, հաղորդակցվել թե՛ մեծերի, թե՛ տարեկիցների հետ: Նրանք ընկալում են մայրենի լեզվի բոլոր հնչյունները, սակայն կարող են դժվար հնչյունների արտաբերման խնդրի հանդիպել: Այս փուլում շարունակական բնույթով գերակայում են դերային խաղերը, որոնք ձևավորում են խոսքի նոր տեսակներ. «Խոսք, որը խաղի մասնակիցներին հրահանգներ է տալիս, խոսք-հաղորդում (ծանուցում), տպավորությունները մեծերին հաղորդող խոսք, նկարագրական խոսք, դատողական խոսք և գնահատողական խոսք, ձևավորվում և զարգանում են նաև մենախոսության պարզ դրսևորումներ»:

Արդեն դպրոց ընդունվող երեխայի խոսքի կառուցվածքը բավական զարգացած է: Շատերը կարողանում են գործածել ինչպես պարզ նախադասություններ, այնպես էլ բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ: Երեխաները խոսքում գործածում են գոյականներ, բայեր և ոչ մեծ քանակությամբ թվականներ ու ածականներ:

Դպրոցում կազմակերպվում է ուսումնական գործընթաց, որն ապահովում է

երեխայի խոսքի զարգացման շարունակական խնդիրը: Եթե նախապրբենական շրջանի սկզբում երեխան գաղափար ունի պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին, ապա նախապրբենական շրջանի ավարտին այդ եզրույթներն օգտագործում են խոսքում, ոչ միայն տարբերակում են ձայնավորն ու բաղաձայնը հնչյունները, այլև գույների միջոցով դրանք արտահայտում են գծապատկերում: Զարգացնում են փոքրածավալ հեքիաթների, պատմվածքների, բանաստեղծություն-ների ունկնդրման, վերարտադրելու արդեն ձեռք բերած կարողությունը: Մայրենի լեզվի ուսուցման նպատակը սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, բարբառային խոսքից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր, գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների մշակումն է: «Տարրական և միջին դպրոցների առաջին մակարդակը նախատեսում է գիտելիքների, հմտությունների ու կարողությունների այն ծավալը, որը բավարարում է կրթական հաջորդ աստիճանին անցնելու»:

Գրաճանաչության նախապրբենական շրջանի դասերն իրենց կառուցվածքով տարբերվում են ինչպես տևողությամբ, այնպես էլ կառուցվածքով, սակայն այստեղ ևս հաշվի են առնված երեխաների տարիքային առանձնահատկությունները, հոգեկան գործընթացների, հիշողության, ուշադրության առանձնահատկությունները: Քանի որ երեխաները շուտ են հոգնում, երկար ժամանակ չեն կարողանում զբաղվել միևնույն գործողությամբ, գործունեության ձևը յուրաքանչյուր 10-15 րոպե հետո փոփոխվում է: Դասը կարելի ընդհատել թե՛ ֆիզիկական վարժությունների կատարման, թե՛ դերային խաղերի կազմակերպման, թե՛ երգի ու հանելուկի գուշակման համար: Դասի հիմնական մեթոդական շղթան նախապրբենական շրջանում.

1. կազմակերպական պահ
2. տնային աշխատանքի ստուգում
3. ֆիզկուլտդադար.
4. անցած ուսումնական նյութի կրկնություն, ամրակայում.
5. հանձնարարված թեմայի կամ թեմատիկ նկարի շուրջ հարցազրույց.
6. շարժուն խաղեր.
7. հնչյունային վերլուծություն, նոր նյութի հաղորդում.
8. դիդակտիկ և հետաքրքրաշարժ խաղեր.

9. նոր նյութի ամրակայում, մարզողական վարժություններ.

10. մատները գրելու նախապատրաստող վարժություններ.

11. գրում.

12. ամփոփում:

Գրաճանաչության նախաայբբենական շրջանում երեխաները ձեռք են բերում ուսուցման կարևոր լեզվական գիտելիք՝ նախապատրաստվելով կարդալու և գրելու գործընթացին: Շարունակվում են աշխատանքները թեմատիկ նկարի շուրջ՝ ուսուցչի օգնող հարցերով կազմում են մտքով իրար կապված նախադասություններ, որը կոչում են պատմություն: Այսպիսի աշխատանքներին ծանոթ երեխաների մոտ որոշակիորեն զարգացած է այս կարողությունը, ուստի գաղափար է տրվում գծապատկերի մասին: Տառաճանաչ չլինելը չի խանգարում պատմությունն ընդգրկել գծապատկերի մեջ՝ գծելով մի վանդակ ու անվանել այն «պատմության տնակ»: Նմանատիպ աշխատանքները միտված են զարգացնելու երեխաների խոսքը, ուստի պարբերաբար անդրադարձ է կատարվում պատմություն հյուսելու, երեխաներին խոսեցնելու, գրագետ և արտահայտիչ խոսք կառուցելու կարողության զարգացման շուրջ:

Պատմություն հյուսելու կարողության ձևավորմանը հաջորդում է նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակության մշակում: Հաշվի առնելով նախակրթարանում երեխաների ձեռք բերած գիտելիքները նախադասությունները պատմությունից առանձնացնելու վերաբերյալ՝ ուսուցիչը նախադասություն առ նախադասություն դանդաղ արտասանում է, առաջարկում երեխաներին ծափերի միջոցով հաշվել նախադասությունների քանակը: Նախադասությունները հաշվելուց, քանակը ճշտելուց հետո պատմության գծապատկերը բաժանում են նույնքան վանդակների, որքան նախադասություն ունեն: Այսինքն՝ պատմության տնակն ունի այնքան մաս, որքան ունենք նախադասություն:

Այդ մասերը միտք են արտահայտում, որն անվանում ենք **նախադասություն**: Ապա տալիս ենք նախադասության գծապատկերը՝ անպայման նշելով, որ նախադասությունը սկսվում է **մեծատառով**, իսկ վերջում դնում ենք երկու կետ ու այն կոչում է **վերջակետ:** Այնուհետև զարգացնում ենք **նախադասությունը** վերլուծելու կարողությունը: Դիտարկվում են նախադասության բաղադրիչները և գաղափար է տրվում **բառի** մասին: Բառի մասին գաղափարը ևս բացատրվում է գծապատկերով,

անվանվում որպես որոշակի իմաստ արտահայտող լեզվական միավոր: Ուսուցչուհին նախադասության օրինակ է գրում գրատախտակին՝ գծելով գծապատկերը: Երեխաներին առաջարկվում է ծափերի միջոցով հաշվել նախադասության մասերը, գծապատկերը բաժանել այնքան մասի, որքան ունեն նախադասության մեջ բառ:

Գծապատկերի շուրջ տարվող աշխատանքը պահանջում է մեծ ջանք, բայց մեծապես նպաստում է գրաճանաչության գործընթացին, ապահովում է խոսքի զարգացում, մշակում, գրագետ խոսք ձևավորելու կարողություն:

Բառի շուրջ աշխատանք տանելիս կարևոր է աշակերտներին բառի և առարկայի տարբերության մասին բացատրել: Այդ գործընթացը դյուրին կարելի դարձնել առարկաներ ցուցադրելով ու բացատելով, որ առարկայի պես հնարավոր չէ բառի հետ գործողություն կատարել: Բառի մասին գիտելիքի ամրակայումից հետո ուսուցիչը անդրադառնում է **վանկի** գաղափարին: Այս դեպքում ևս նախադասությունից դուրս է բերվում բառը, ցանկալի է երկվանկ, նախ արտասանում, այնուհետև ծափերի միջոցով կատարվում է վանկատում: Երեխաները բառն արտասանում են, ծափ տալով բաժանում վանկերի, հաշվում մասերը ևնշում քանակը: Վանկի գաղափարն ամրապնդվում է վանկային վարժությունների միջոցով:

Հնչյունի մասին ուսուցիչը գաղափար է տալիս կրկին գծապատկերի օգնությամբ: Երեխաներին հանձնարարվում է միավանկ բառեր ասել և գծապատկերի օգնությամբ ցույց է տրվում, որ միավանկ բառերն ունեն ոչ միանման գծապատկերներ, նրանց կառուցվածքը տարբեր է: Բառի գծապատկերը կարող է բաղկացած լինել ինչպես երկու, այնպես էլ երեք կամ չորս մասերից: Այստեղ խոսվում է հնչյունի գաղափարի մասին: Իսկ գործնական ճանապարհով երեխաները սովորում են ձայնավոր ու բաղաձայն հնչյունների տարբերակումը: Այս նպատակով կատարվում է բառի հնչյունային վերլուծություն: Խմբով արտասանելով՝ նշում են, թե որ հնչյունն է բառի սկզբում, բառամիջում և բառավերջում: Հնչյունների արտասանության վրա հրավիրում ենք սովորողների ուշադրությունը, նշում. «-Ա- արտասանելիս, ինչպես նկատեցիք, օդը բերանից դուրս է գալիս առանց արգելքի: Ուշադրությո՛ւն դարձրեք՝ ա՜…, լեզուն բերանի մեջ չի կպչում պատերին: Իսկ հիմա արտասանենք՝ լը…, տեսե՛ք, լեզուն կպչում է վերևի ատամներին, և ձայնն արգելքով է բերանից դուրս գալիս»:

Մի շարք գործողությունների կատարմամբ իրականացվում է բառի հնչյունային վերլուծության կարողության մշակում և խորացում:

Նախաայբբենական շրջանի հիմնական խնդիրներից է նաև **հնչյունային լսողության զարգացումը**: Այն կարևոր դեր ունի թե՛ գրելու, թե՛ կարդալու կարողությունների ձևավորման գործընթացում: Գրել-կարդալ սովորեցնելու գործընթացում կարևոր է յուրաքանչյուր երեխայի հնչյունային լսողության զարգացումը: Այս աշխատանքի թերացման հետևանքով կարդալու և գրելու կարողության անբավարար զարգացում է տեղի ունենում, որի հետևանքով առաջանում է ուսումնական ոչ լիարժեք գործունեություն:

Նախաայբբենական շրջանում ձևավորվում է կարդալու կարողությունը, որը հետագայում գիտելիքի ձեռքբերման, բառապաշարի ընդլայնման, խոսքի զարգացման հիմնական միջոցն է: Ուստի մեր նպատակն է հետամուտ լինել երեխայի հնչյունային լսողության ճիշտ զարգացման խնդրին, իրականացնել համակարգված այնպիսի աշխատանք, որը ճիշտ հիմք կհանդիսանա և կապահովի առաջընթաց կարդալու, հետագայում նաև գրելու գործընթացի կարողության զարգացման համար:

Նախաայբբենական շրջանում կարևոր է վարժությունների (առաջադրանքների) և խաղերի դերը, որի միջոցով ուսուցիչը քայլ առ քայլ, համաչափ և հետևողական կերպով, զարգացնում է աշակերտների տեսողության, լսողության, տրամաբանության, մտածողության և մյուս զգայական կարողությունները, կենտրոնացվածությունն ու հիշողությունը: Այս ամենն, առաջին հերթին, հարկավոր է, որպեսզի մատուցվող նյութը պարզ և ընկալելի լինի աշակերտների համար, ինչը թույլ կտա նաև մատուցվող նյութը առավել ամրակայել վերջիններիս մոտ:

Այսպիսով, սա այն նվազագույնն է, որը պետք է կազմի և որին պետք է տիրապետի մանկավարժ-ուսուցիչը առաջին դասարանի աշակերտների հետ աշխատելիս և նախաայբբենական շրջանում կարդալու կարողությունը զարգացնելիս: Կրթադաստիարակչական գործընթացում ոչ պակաս կարևորություն ունեն նաև դիդակտիկ խաղերը: Խաղալիս երեխաները ոչ միայն իրականություն են դարձնում իրենց ձգտումները, երևակայածն ու տպավորությունները, այլև համոզվում են գիտելիքների անհրաժեշտության և խաղի ժամանակ հաղթահարելու համար դրանց պարտադիր իմացության մեջ:

Նախաայբբենական շրջանին ներկայացվող մանկավարժամեթոդական պահանջները

Մեր հիմնախնդրի ուսումնասիրման շրջանակներում կարևորել ենք մանկավարժին ներկայացվող մեթոդաբանական պահանջների և նախաայբբենական շրջանի մասին խոսելը: Նախաայբբենական փուլի վերջում երեխան գաղափար է ունենում պատմություն, նախադասություն, բառ, վանկ, հնչյուն, ձայնավոր և բաղաձայն հասկացությունների մասին, իսկ հաջորդ փուլերում սկսում է պատմություն հյուսել, գրել և կարդալ: Սակայն վերջին երեք գործողությունները տեղի են ունենում ավելի ուշ: Այլ կերպ ասած՝ *նախաայբբենական շրջանը մի փուլ է, որի ընթացքում մանկավարժը երեխային փորձում է նախապատրաստել մայրենի լեզուն բանավոր և գրավոր արտահայտելու և իր միտքը տառերով ու բառերով վերարտադրելու գործընթացին:* Այս գործընթացում անչափ կարևոր է դասագրքերի դերը: Ի՞նչ է իրենից ներկայացնում այբբենարանը, և ինչի՞ համար է այն անհրաժեշտ մանկավարժին՝ երեխաների հետ աշխատելիս: Աշխարհի գրեթե բոլոր ազգերն ունեն իրենց Այբբենարանը: Այբուբենիծագման վերաբերյալ հարցը մինչ այսօր շարունակում է մնալ ոչ ամբողջովին բացահայտված, չնայած նրան, որ առկա են դրան նվիրված բազմաթիվ հետազոտություններ: Փյունիկյան այբուբենը, որը թվագրվում է Ք.ա. XV դարին, համարվում է մարդկության պատմության մեջ գոյություն ունեցող բոլոր այբուբենների նախահայրը:

Այբուբենի ծագման ակունքների որոնումները մեզ կարող են տանել հնագույն քաղաքակրթությունների պատմության խորքերը: Դրանց հետազոտումն ու այբուբենների ստեղծման վերաբերյալ առկա տեսությունների հիմնավորումը թողնենք հնէաբաններին, մարդաբաններին, լեզվաբաններին և պատմաբաններին: Վերջապես ի՞նչ է իրենից ներկայացնում այբբենարանը: Այն կարելի է սահմանել որպես գրության ձև՝ հիմնված նշանների ստանդարտ հավաքածուի վրա: Այբբենարանը միաժամանակ նաև դասագիրք է: Եվ ինչպես յուրաքանչյուր դասագիրք, այն ևս ուսումնական աշխատանքի կազմակերպման կարևոր միջոց է: Այբբենարանը, իր բովանդակության առումով, և նման չէ մյուս դասագրքերին:

Այսօր այբուբենի ուսուցման գործում մեծ դեր է վերապահված հենց մանկավարժ-ուսուցչին: Ակնհայտ է, որ երեխայի հետ *«Այբբենարան»*-ով աշխատելու նախապատրաստական գործողությունները մանկավարժները հիմնականում սկսում

են նախադպրոցական տարիքից: Այս ժամանակահատվածում երեխայի մոտ արդեն իսկ ինչ-որ չափով ձևավորված են հնչյունային կարողությունները, բառեր արտասանելու և խոսելու հնարավորությունը, ինչը մանկավարժին թույլ է տալիս հեշտությամբ նրանց սովորեցնել իրենց իսկ կողմից արտասանվող տառերի, բառերի, պատկերների կամ առարկաների, երևույթների գրելու ձևը:

Գրաճանաչությունը նախաայբբենական շրջանում բաժանվում է երկու հիմնական կրթադաստիարակչական խնդիրների՝ *կազմակերպականի* **(գծպ. 1)** և *ուսումնականի* **(գծպ. 2).**

Գծապատկեր 1.



Կազմակերպական խնդիրներն, իրենց հերթին, բաժանվում են հիմնականում երկու ենթաբաժնի, որոնցից առաջինի դեպքում երեխաներին ծանոթացնում են նրանց համար նոր և բոլորովին անծանոթ ուսումնական գործընթացի, իսկ երկրորդն ուսումնական գործունեությանը և աշակերտի նոր սոցիալական դերի հարմարեցումն (ադապտացիա) է: Ուսումնական նոր գործունեության ընթացքում կարևոր տեղ է զբաղեցնում երեխայի ծանոթացումը ուսուցչի և համադասարանցիների հետ: Ոչ

պակաս կարևոր նշանակություն ունի դասարանային (մանկական) կոլեկտիվի ձևավորումն ու ընկերների ձեռքբերումը: Ծանոթությունից հետո ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է կրթական հաստատության կարգուկանոնին, ծանոթացնում է դպրոցի շենքին: Բացի այդ, ուսուցիչն աշակերտներին պարտավոր է ներկայացնել վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները, սովորեցնել նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության կամ ձայն խնդրելու ճիշտ վարվեցողությանն ու ընթացակարգին:

Նոր ուսումնական գործունեությանը երեխաներին ծանոթացնելիս ուսուցիչը նաև պարտավոր է վերջիններիս մոտ զարգացնել առոգանությամբ, ինքնավստահ և համարձակ խոսելու կարողությանը: Երեխայի խոսքն ու պատասխանը պետք է լինեն պարզ, հստակ և բարձրաձայն: Ուսուցիչը նաև աշակերտների մոտ զարգացնում է իրեն և մյուս համադասարանցիներին լսելու, կարծիք հայտնելու, արտահայտվելու ճիշտ կուլտուրային: Շատ կարևոր նշանակություն ունի նաև այն, որ ուսուցիչը պետք է կարողանա աշակերտի մոտ ձևավորել իրեն և իր համադասարանցիներին բարեկիրթ պատասխանելու կարողությունը:

Ուսումնական գործունեության կարևոր գործընթացներից կարելի է համարել ուսուցչի կողմից աշակերտներին դասագրքերից և գրենական պիտույքներից ճիշտ և խնամքով օգտվելու կանոնների և էթիկայի ներկայացումը:

Գծապատկեր 2.



Կրթադաստիարակչական խնդիրների ուսումնական ենթաբաժնին են վերաբերում՝

- հաղորդակցվելու ունակությունների մակարդակը,
- հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունների ճիշտ արտասանելու կարողությունը,
- բանավոր կապակցված խոսքը,
- խոսքի շարահյուսական կառույցը:

2.1 Հետազոտության ուսումնասիրման արդյունքների դիտարկում և վերլուծություն

Առաջին դասարանի աշակերտների նախաայբբենական շրջանում կարդալու կարողության զարգացման վերաբերյալ մեր իրականացրած հետազոտությունն առավել ամփոփիչ դարձնելու համար անցկացրեցին հարցախույզ թվով 10 դասվարների շրջանում:

Ստորև ներկայացրել ենք հարցախույզ արդյունքները.

Առաջին հարց: *«Առաջին դասարանի աշակերտների խոսքի զարգացմանը նպաստող մեթոդներից որո՞նք են առավել արդյունավետ.*

ա) զննական մեթոդ

բ) խոսքային մեթոդ

գ) վերարտադրողական մեթոդ

դ) ստեղծագործական մեթոդներ



Առաջին հարցին հարցախույզի 10 մասնակիցների մեծամասնությունը (40% կամ 4-ը) առաջին դասարանի խոսքի զարգացմանը նպաստող մեթոդներից առավել արդյունավետ է համարել *խոսքային մեթոդը:* 10 մասնակիցներից միայն մեկն է, որ այդ գործընթացում արդյունավետ համարել է *ստեղծագործական մեթոդը:*

Երկրորդ հարցին *(«Նախաայբբենական շրջանում աշակերտների խոսքի զարգացման գործընթացում ո՞ր աշխատանքներն են ուսուցիչները կարևորում»)* հարցման մասնակիցներն արտահայտել են իրենց անձնական կարծիքը: Պատասխանները ներկայացված են ստորև (հատուկ առանձնացրել ենք 5-ը).

1. Մեծադիր նկարի շուրջ պատմությունների կազմումը;
2. Հնչյունների ճիշտ արտահայտությունը;
3. Դիդակտիկ խաղերը;
4. Աշակերտների կարողությունների բացահայտումը;
5. Հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը:

Երրորդ հարց: *«Առաջին դասարանի աշակերտների խոսքի ո՞ր տեսակն է առավել զարգացած».*

ա) պատմողական **գ)** դատողական

բ) նկարագրական **դ)** գնահատող



Մանկավարժ-դասվարների գերակշռող մեծամասնությունը (80% կամ 8-ը) նախապատվությունը տվել են նկարագրական խոսքի տեսակին՝ համոզված լինելով, որ հենց այս խոսքի տեսակն է առավել զարգացած նախակրթական դպրոց հաճախող առաջին դասարանի աշակերտների մոտ:

Հարցախույզին մասնակիցների միայն 20%-ը (2 անձ) այն կարծիքի է, որ նախակրթական դպրոց հաճախող առաջին դասարանի աշակերտների մոտ առավել զարգացած է պատմողական խոսքը:

Չորրորդ հարց: *«Նախադպրոցական շրջանի ո՞ր առաջադրանքներն են առավել զարգացնում առաջին դասարանի աշակերտների հնչյունային լսողությունը.*

ա) խաղերը **բ)** մեթոդական հնարները

գ) նշեք Ձեր տարբերակը



Հարցախույզի մասնակիցներից 70%-ը կամ 7-ը գտնում են, որ նախաայբբենական շրջանում խաղերն են զարգացնում առաջին դասարանի աշակերտների հնչյունային լսողությունը, իսկ 20%-ը կամ 2-ը կարծում են, որ դրանք մեթոդական հնարներն են:

Եվ հարցախույզի մասնակիցներից միայն մեկն է, որ հայտնել է իր սուբյեկտիվ կարծիքը. *«Ներկայացնենք հնչյունային լսողությանը զարգացնող մի քանի խաղ.*

«Բնակեցրու կենդանիներին «Հավաքիր ծաղիկը, Այն ո՞վ է կանչում, Բառաշղթա, «Գտիր սխալը և այլն:

Հինգերորդ հարց: *«Նախաայբբենական շրջանի խաղերի ո՞ր տեսակներն են նպաստում դասարանի աշակերտների վերլուծական մտածողության զարգացմանը.*

ա) «Բառը բառի մեջ,

բ) «Բառախաչ,

գ) «Խառնագիր,

դ) նշեք Ձեր տարբերակը

Հարցախույզի մասնակիցների կեսից ավելին (6-ը) համոզված են, որ նախաայբբենական շրջանի խաղերի միջից երեխաների վերլուծական մտածողության զարգացմանը նպաստում է *«Բառը բառի մեջ»* խաղը, մինչդեռ 2- ական ձայն ստացել են *«Բառախաչ»* և *«Խառնագիր»* տարբերակները: Բացի այդ, հարցախույզի հինգերորդ հարցը հնարավորություն էր տալիս նաև առաջարկել սեփական տարբերակը, որտեղ 2 մասնակից առաջարկել է *նկար-պատմություն* տարբերակը:


«Բառը բառի մեջ»
50,0%
«Խառնագիր»
20,0%
«Բառախաչ»
20,0%
Նկար-պատմություն
10,0%
0%
10%
20%
30%
40%
50%
60%
70%
80%
90%
100%

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կարևոր ենք համարում մասնագիտական գրականության մեջ և մայրենիի դասավանդման մեթոդիկային նվիրված հոդվածներում վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության կազմակերպման խնդիրներին և հատկապես դժվարությունների հաղթահարմանը մանրամասն վերլուծություններով անդրադառնալը:
- զարգացնել կարդալու կարողության ձևավորմանն ուղղված մեթոդական գրականությունը:
- կատարելագործել նախաայբբենական շրջանում երեխաների կարդալու կարողության ձևավորմանը նպաստող խաղերն ու մեթոդական հնարները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Առաջին դասարանում կարդալու կարողության ձևավորման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նախաայբբենական շրջանում սովորողների ձեռք բերած գիտելիքներով և կարողություններով:
- Հայաստանի Հանրապետության այլընտրանքային այբբենարանների նախաայբբենական շրջանի բոլոր նյութերը հնարավորություն են ընձեռում առաջին դասարան ընդունված աշակերտներին կարդալու կարողության գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար:
- Գրաճանաչության դասաժամերին ԽԻԿ համակարգի տարբեր փուլերում կիրառվող մեթոդներն ու խաղերը կարդալու կարողության ձևավորման գործընթացը դարձնում են ավելի արդյունավետ:
- Կարդալու կարողության ձևավորման նպատակով մեր մշակած վարժությունների համակարգը լեզվական նախագիտելիքների ուսումնասիրման գործընթացը դարձնում են ավելի հետաքրքրաշարժ և մատչելի: Սովորողները գործնական ճանապարհով ձեռք են բերում գիտելիքներ, սովորում են դրանք խոսքում ճիշտ կիրառել, ինչպես նաև այն նպաստում է սովորողների կարդալու կարողության ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., «Խաղալով սովորենք», Երևան, «Զանգակ-97», 2009, 80 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., «Խոսքի զարգացում», Երևան, «Զանգակ-97», 2004, 288 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., «Կարդալու կարողությունների և խոսքի զարգացման տարրական դասարաններում», Երևան, «Լույս», 1998, 125 էջ:
4. Գյուլամիրյան Ջ., «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան, «Զանգակ-97», 2006, 326 էջ:
5. «Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագրեր, չափորոշիչներ (1-9-րդ դասարաններ), Երևան, 2011, 81 էջ:
6. Սարգսյան Վ., «Այբբենարան», Հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի համար, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2000, 120 էջ:
7. Սարգսյան Վ., «Այբբենարան: Հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի համար», Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2006, 156 էջ:
8. Սարգսյան Վ., «Այբբենարան» (մեթոդական ձեռնարկ), Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2006, 196 էջ:
9. Տեր-Գրիգորյան Լ., Քյուրքչյան Ա., «Այբբենարան», Երևան, «Էդիթ Պրինտ», 2011, 126 էջ:
10. Տեր-Գրիգորյան Ա., ««Արևիկ» այբբենարանի մեթոդական ուղեցույց», Երևան, «Լույս», 1986, 288 էջ:
11. Տեր-Գրիգորյան Ա., «Աշխատանք այբբենարանով», Երևան, «Լույս», 1979, 254 էջ:
12. Տեր-Գրիգորյան Ա., «Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը», Երևան, «Լույս», 1985, 155 էջ:
13. Козлова С., «Теория и методика ознакомления дошкольников с социальной действительностью», Москва, «Академия», 2004, 160 с.
14. Янина С., «Классики педагогической мысли о роли чтения книг в духовно-нравственном воспитании», №10, Тобольск, 2001, с. 29 – 31.

15. «Концепция дошкольного воспитания» // Дошкольное воспитание, Москва,